

# Երեւոնյա այսպէս

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱԾՏԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՊԱՆԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ (Սուրբ Էջմիածին, 2008 թ. մարտի 23)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.  
ամեն:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ  
գանա կրիսեաց  
եւ յարութեամբն Իրով մեզ զկեանս  
պարզեաւն»

(Ժամագիրք):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփյուռս.

Հոգոյ խնորոյսմբ ողջունում ենք ձեզ  
Քրիստոսի հրաշափառ հարության պատի-  
սամ:

Բարձրախի հետ ապրեցինք Մեծ Պահիի  
արդարական, խորհրդաշատ օրերը, ապրե-  
ցինք խնդրամատույց հայցով, մեր հոգու  
հույզեցով, նաեւ՝ տաղանապով ու ցավով, որ  
քերեցին մարտի 1-ի ողբերգական իրադար-  
ձությունները: Ավագ Շարաքվա խորհրդով  
հարողովեցինք մեր Տիրոջ երկրային կյան-  
քի վերջին օրերի փրկչական տնօրինու-  
թյուններին:

Մարտի 23-ին մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը մե-  
ծագույն հանդիսավորությամբ նշվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

Առավոտյան Մայր Աթոռի եւ ԳՐԱՄ-ի հայրողյաց տների հայրուրավոր աշակերտներ  
քայլերով Սբ Հռիփսիմե վանքից շարժվեցին դեպի Մայր տաճար: Թմբուկների ձայների  
ներքո խանդավառ մանուկները բաղաճի բնակիչների հետ եկան Սբ Տրդատի կամարի  
առջեւ՝ դիմավորելու հայրապետական թափորը:

Ժամը 10.30-ին թափորը Ամենայն Հայոց Հայրապետին անպիտանակով առաջնորդեց  
դեպի տաճար, ուր Հայոց Հայրապետը Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով  
մատուցեց Սբ Պատարագ:

Նորին Սրբությանը որպէս առընթերակակներ սպասավորում էին Եզնիկ արք. Պետրո-  
սյանը եւ Արշակ եպս Խաչատրյանը:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին 33 նախագահ Ռեբերտ Զոհարյանը,  
33 նորընտիր նախագահ, 33 վարչապետ Սերժ Սարգսյանը, 33 կառավարության անդամ-  
ներ, ԱՄ պատգամավորներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հա-  
վատարանգրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, Հայաստանում  
գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթու-  
թյան, արվեստի եւ մշակույթի գործիչներ:

Ավարտին Վեհաբանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:  
Սբ Տրդատի բաց խորանի առջեւ համերգային ծրագրով հանդես եկան Մայր Աթոռի  
եւ ԳՐԱՄ-ի հայրողյաց տների սաները:

րոզեն Աստծո սիրո, խաղաղության վար-  
դապետությունը, երկնային արքայության  
Ավետարանը:

Այսօր մեր Տերն այլեւ Պիղատոսի առ-  
ջեւ կանգնած անպաշտպան, մարդկանցից  
լրված եւ ուրացված անբաստանյալը չէ: Ոչ  
էլ չարչարված, տանջված եւ խաչը ուսին  
Գողգոթա բարձրացող դատապարտյալը:  
Գերեզմանի մեջ ամփոփված խաչալը չէ,  
այլ հարուցյալը՝ Տերը արարչության եւ  
հատրական Փրկիչը մարդկության:

«Ո՞ր է, մահ, քո հատրությունը: Ո՞ր է,  
գերեզման, քո խայրոցը» (Ա Կորնթ. 15: 55):  
Մահն այլեւս անտարելություն չէ, կյան-  
քի ավարտ չէ եւ հետեւություն չէ: Գերեզմանը  
վախճանը, վերջը չէ այլեւս: Քրիստոսի հա-  
րության «վերջ» խորտակվեց, եւ գերեզ-  
մանից այն կողմ ճանապարհն է դեպի հա-  
վիտենություն: «Հավիտենական կյանքը  
այս է. որ ճանաչես Քեզ միակ ճշմարիտ  
Աստված, նաեւ Հիսուս Քրիստոսին, որ Դու  
ուղարկեցիր» (Հովհ. 17: 3), - ասում է մեր Փր-  
կիչը՝ Իր եւ մեր Հորը դիմելով:

Հավիտենական կյանքի ուղին այս աշ-  
խարհում Քրիստոսով հարուցյալ, նոր  
կյանքն է, որը պարզեւնում է մարդկանց  
Քրիստոս աստվածային Իր գործընթացը:  
Վերածնված հոգու այլ նորոգյալ կյանքը  
ազատ է չարի իշխանությունից: Մեր Տերը  
հատրել է չարին, կործանել է մահը եւ բոլոր  
մարդկանց ընծայել է վերադրույն ծնվելու,  
Աստծո որդեգիրները լինելու շնորհը:

Աստծո ստեղծածն է աշխարհը, ուր ապ-  
րում ենք: Ամեն բան Նրա ձեռքի գործերն  
են: Ինչ որ ունենք, Նրան է պատկանում:  
Բայց աշխարհի մեջ Արամի օրից սկսյալ  
մարդը ու թիչ ղեպքերում, կամս թե պկամս,  
գործիք է դառնում չարի ձեռքին եւ քանդում  
է Աստծո ձեռակերտը, մոայլում է արար-  
ել չաստեղծ կյանքի ուրախությունը: Այսօր էլ  
չաստեղծ կյանքի ուրախությունը, անհա-  
մարդկային կյանքում չարությունը, անհա-  
վատությունը, նյութապաշտությունը, ստաթ,  
ատելությունը, իշխանատենությունը մահ  
են սերնամում եւ մեծ ու փոքր գերեզմաններ  
փորում: Այսօր էլ մեք ստիպված ենք ըն-  
դունել, որ մարդու կյանքը այնպես եւ այն  
չափով արժեքավոր չէ, որքան հրավերն է  
Տիրոջ ու Կամրը Նրա Փրկչական:  
Խաղաղության եւ արդարության ու  
քրոնոմմեքում մարդ  
անկան մերի  
ների դռներ է բա-  
ցում, անիրավու-  
թյուն սերմանում,  
քանգի Տիրոջ  
պարգեւած հոգու  
խաղաղությունն  
ու արարությունը  
չէ, որ փնտ-  
րում է, այլ խա-  
ղաղության ու  
արդարության  
անկան մերի  
սեփական ապա-  
տելությունն ու  
չարի: Արդարեւ,  
կորստաբեր են  
Աստծո Կամրին հակառակ ընթացքները:  
Տերն Իր կյանքը տվեց՝ մարդուն կորստից  
փրկելու համար եւ կոչեց մարդկանց այրե-  
լու հավատով, սիրով եւ հույսով: Այս արժեք-  
ներով են իրականացնում հոգեւոր վերա-  
ծնունդը եւ բարոյական առաջադիմությունը  
մարդկության: Այս ճշմարիտ արժեքներով  
են կյանքի կոչվում հասարակական կյանքի  
առաջընթացները, գործում իրավունքն ու օր-  
ենքը՝ համուն մարդկանց բարոյության:

Աշխարհափախու սիրելի ժողովուրդ հայրոց,  
Մեր պատմության ընթացքում մեզ նույն-  
պես հաճախ պարտել է մահվան շուրթ,  
խոցվել ենք խոր, խավար օրերում ենք ապ-  
րել, բայց լուսատենչ հայացքով փնտրել ենք  
տականության ամրության, մեր երկրի ա-  
նրդնեջ առաջընթաց, որպիսի հարաբ-  
անքներ մեր կյանքը խանգարող յժվարու-  
թյուններ, եւ համուն մեր Հայրենիքը գորու-  
թյամբ, որը հույսն է մեր ժողովրդի միացյալ  
կյանքի եւ հարստություն:

երկնայնորի արշալույսները: Չափել ենք  
չարչարանքի եւ մեղության խորությունը,  
բայց վեր ենք հանուն հերոսական խոյանը-  
ներով: Այս օրերին էլ փորձություն մեջ ենք:  
Խոտկված է Հայրենիքի խաղաղ կյանքը,  
վտանգված պետության կայունությունը, ու-  
րաշակիրեն հարված է հասցվել մեր պետու-  
թյան վարկին եւ մեր ժողովրդի բարի անվա-  
նը, որոնք մեր մեծագույն ձեռքբերումներն  
են: Անհանրոժողությունը, ատելությունը,  
առճակատումը ճանապարհ չեն վերացնելու  
մեր կյանքի արատավոր երեւոյթները, վճե-  
րելու ազգի առջեւ ծառայած խնդիրները:  
Դրանք նոր վերքեր են ավելացնում եւ նոր  
բարդություններ, սպառնալիքներ հավելում  
մեր կյանքին: Մենք խնդիր ունենք հոգալու,  
որ մեր իրավամտությունից վանվեն ամեն չա-  
քանհար ու ստահող խոսք, արարք ու ըն-  
թացք: Հարկ ի վերա մեր կա՝ նախանձամե-  
ղի լինել, որպեսզի մեր իրավամտության մեջ  
ճանապարհի հարթեն ճշմարիտ նորախա-  
րությունը, արդարամտությունն ու օրինա-  
հարգությունը, հավատն ու վստահությունը,  
հաշտության եւ խաղաղության հույզն: Անճ-  
վագ դարձները մեր ցանկերը՝ ի սեր մեր պե-



Յրվել էին Նրա աշակերտներն ու հե-  
տեւորդները տարակուսած ու վշտահար,  
երբ խաչվել էր Վարդապետը: Ոճանք ու-  
րացել էին Նրան եւ տանջվում էին մեղա-  
վորության զգացումից: Ուրիշները իշխա-  
նության եւ փառքի մեծ հույսեր էին կապել  
Նրա հետ եւ հիմա ապրում էին իրենց հույ-  
սերի կործանման ցավով: Բայց հարու-  
ցյալ Քրիստոս հայտնվեց նրանց, փարա-  
տեն վիշտն ու կասկածը, վերականգնեց  
նրանց ճշմարիտ հավատի ու հույսի մեջ,  
հաստատեց առաքելության մեջ, որ ավե-  
տեն մարդկանց փրկության շնորհը, բա-

# ՄԱՍՆԸ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՊԱՆԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Լինել մի հոտ եւ մի հովիվ: Հայր Աստուծո Սուրբ Աջի պահպանության ներքո, Հարություն մեր Փրկչի Սուրբ Խաչի նշանով եւ Սուրբ Հոգու շնորհարաշխ առաջնորդությամբ կերտենք այն ապագան, որը բոլորն ենք երգում՝ հզոր, անասան Հայոց պետություն, աստվածասեր, հայրենասեր, երջանիկ հայ ժողովուրդ: Սեր Հայրենիքի ու ժողովրդի համար հոգալով՝ գանձեր պիտի կուտակենք մասն ալ մասով՝ հավիտենական կյանքի համար, որը Սուրբ Հարության տոնը մեզ պատմում է:

«Արդ՝ ինչպես որ ընդունեցիք Քրիստոս Հիսուսին՝ Տիրոջը, այն-

Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրադյանին, Քույր Եկեղեցիների շնորհագրող հոգեւոր Պետերին: Հայրապետական Սեր սերն ու օրհնությունն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասավորներին եւ հավատավոր Սեր գավակներին ի սիրտ աշխարհի:

Սեր օրհնությունն ու ողջույնն ենք բերում Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիգրան Արթուրյանին, Հայաստանի Հանրապետության ընտրյալ Նախագահ, Վարչապետ Տիգրան Սերժ Սարգսյանին, Լեւոնային Գարաբաղի Հանրապետության Նախագահ Տիգրան Սահակյանին, հայոց պետական

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ոսկւմյայի արարողությունը

Մարտի 20-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, Միածնաէջ Մայր տաճարում հավարտ առավուտյան ժամերգության կատարվեց ապաշխարության կարգ, ապա սկսվեց Սբ Պատարագը՝ ի հիշատակ Սբ Գիսուն Զրիստոսի վերջին ընթրիքի եւ Սուրբ Գաղղղոթյան խորհրդի հաստատման: Պատարագին էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գանիել վարդապետ Ռումակյանը:

Հետմիջօրեին ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրապետի Պատրիարքի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց Ոսկւմյայի արարողությունը: Սուրբայային ընթրեցումներից եւ օրվա խորհրդի նվիրված շարականների երգեցողությունից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց յուզը, որն արարողությունից հետո բաշխվեց հավատացյալներին:



Այնուհետեւ, Գիսուն Զրիստոսի օրինակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը վազ եւ յուզով օծեց հոգեորականների եւ զինվորների յուզը: Հայաստանի այլ եկեղեցիներում եւս բազմաթիվ զինվորականներ մասնակցեցին Ոսկւմյայի արարողությանը:

Երեկոյան՝ սինգել ուշ գիշեր, կատարվեց հավաքման կարգը, որը հիշատակն է Փրկչի չարչարանների եւ խաչելության:



պես էլ քրթացեր Նրանով՝ արժանավորված եւ կատարված Նրա վրա, հաստատ մնալով հավատի մեջ, ինչպես որ ուսանեցիք, որպեսզի անծեր Նրա մեջ գոհությամբ» (Վոյ. 2: 6-7):

Սեր Տիրոջ հրաշափառ հարության պատիստով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Լուսավորչի Սուրբ Գահից, ի Քրիստոս նորայրական սիրով ողջույն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Արտաների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գանիել Ա Սծի Տանն Կիլիկիայի Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ

որը ավագանուն ու Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Արթուր մեր, որ երկնային խաղաղությունը հաստատվի մեր Հայրենիքում, համայն աշխարհում, բոլոր մարդկանց հոգիներում:

Թող կենսատունն եւ կյանքի առաջնորդը՝ Տերը մեր Հիսուս Քրիստոս, Իր հարության յուշով օրհնի մեր կյանքը եւ լուսավորի ուղին ազգիս հայրոց:

Շնորհք, սեր, հավատ, հույս եւ գործընթաց մեր ողջ ժողովրդին եւ համայն աշխարհին, ամեն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՄԱՆՈՒՄԱՆ

EDUCATION AS A PRECONDITION OF DEVELOPMENT

Մարտի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Կրթությունը՝ զարգացման առաջնային» ժողովածուի եւ «Կրթության իրավունք» գրքի շնորհանդեսը՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կյուր սեղանի հիմնադրամի կողմից:

«Կրթությունը՝ զարգացման առաջնային» ժողովածուն ներկայացնում է ԵՅԽ Հայաստանյան կյուր սեղանի հիմնադրամի կողմից՝ Կրթական եւ զարգացման ծրագրի շրջանակներում 2007 թ. հունիսի 8-10-ը Ծաղկաձորում կազմակերպված «Կրթությունը՝ զարգացման առաջնային» կրթական երիտասարդական համագումարի ընթացքում ներկայացված գեկուցումները եւ համագումարի արդյունքների ամփոփումը: Զեկուցումները հիմնականում ար-

ծարձում են կրթական բարեփոխումներին, արտադրողական եւ միջին մասնագիտական կրթությանը, բնագիտական դաստիարակությանը, կրթական ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական տարբեր մարմինների, Եկեղեցու եւ հասարակական կազմակերպությունների համագործակցության ամուլված խնդիրներ:

Ժողովածուն պատրաստվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կյուր սեղանի հիմնադրամի նախաձեռնությամբ եւ հրատարակվել Եկեղեցական զարգացման ծառայության՝ Գեոմանյիսի Բողոքական Եկեղեցիների միություն կազմակերպության (EED) ֆինանսական օժանդակությամբ:

«Աստանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարան» շարքի «Կրթության իրավունք» գիրքը հրատարակվել է ԵՅԽ Հայաստանյան կյուր սեղանի հիմնադրամի կողմից: Բոլորը թվարկվում են նաեւ կրթության ոլորտը կարգավորող ներպետական եւ միջազգային փաստաթղթեր, կրթության հարցերում միջազգային հանրության ամենաբնական համագործակցությանը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանագետ Արշակ Եպս Խաչատրյանը:

ՇՆՄԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՍՏՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

յանը, փոխանցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու գնահատանքը, անորադրածով կրթության կարեւորությունը, հոգեւոր-բարոյական դաստիարակության խնդիրներին եւ հասարակության մեջ հոգեւոր արժեքների գործադան անհրաժեշտությունը:

Հրատարակությունների առիթով իրենց մտքումներն արտահայտեցին Գրավար Ար. Մանուկյանը, Կյուրիք քնն. Տայանը, Ահարամ քնն. Մեխիզյանը, Կրթության ազգային ինստիտուտից՝ Մելանյան Դավիթյանը, Կրթության եւ գիտության նախարարությունից՝ Արտակ Աղբալյանը, Արմավիրի մարզի Առաջին տայանի հյուրարանի նախագահ Գրաչիկ Սարգսյանը:

Շնորհանդեպ եղափակվեց ԵՅԽ Հայաստանյան կյուր սեղանի հիմնադրամի տնօրէն Կարեն Լազարյանի խոսքով:

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### «Մեկնութիւնը մարգարտութեանն Գանիելի»

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնից լույս է ընծայել «Հին հասկարանի գրքերի մեկնություններ» մատենաշարի հերթական գիրքը՝ Հայ Եկեղեցու նշանավոր հայրերից Կարապետ Արեւելցու, Գրիգոր Երզնկացու (Երզնկացի) եւ Թովմա Սեծովիցցու՝ Գանիելի մարգարտության մեկնությունները:

Գիրքը հրատարակվել է աշխատափորությամբ Մարթա Արարյանի, Գայանե Ներսիսյանի եւ Հա-

կոբ Քոստյանի: Մատենաշարի գլխավոր խմբագիրն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրէն Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը: Գրքի հրատարակությունն իրականացվել է «Լեւոն սրկ. եւ Արաքսի 261» հիմնադրամի մեկնասուրբով:

Հայ մեկնողական գրականության մեջ կրթողական նշանակություն ունեցող այս երկերը բացարձակ արժեք ունեն հավատացյալների հոգեւոր պահանջներին գոհացում տալու տեսակետից:

## «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշան՝ Կարուսան հսրը շայակհին

Մարտի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը լիբանանական թատերական գործիչ Կարուսան Խոջայանին ծննդյան 70-ամյակի առիթով հանձնեց Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվով բարձր շքանշան՝ մշակույթի անուանատունն Նրա ներդրումի եւ արգասավոր ծառայությանն ու վաստակի համար:

«Գոհունակություն է Մեզ համար անորադրանալ թատերական արվեստի ասպարեզում Ձեր երկարամյա եւ գովարժան գործունեությանը: Մշակույթի նկատմամբ սիրո եւ գիտելաց լույսը ստանալով տարանդաշտն ուսուցիչներից, դռնախով օժտված դերասանն ու բեմադրիչ եւ հայտնի թատերախմբերի ղեկավար՝ Ձեր քաջեանալ աշխատանքով աստվածապարգեւ Ձեր շնորհն ու կարողությունները ի սպաս դրեցիք՝ բարեգործելու հայ թատերախմբերի ավանդները նորակող ձեռքերով: Ամենով Սեծապետ գնահատելի է հայր-

ուղ աստվածահաճո վաստակ սփյուռքահայ թատրոնի գործադանն եւ հատկապես Հայաստան-Սփյուռք թատերական կապերի ամրապնդումն ու արդուակվորման կարեւոր գործում: Թատերասեր հայ հասարակությանը ծանոթ եւ Ձեր բեմադրությունները եւ հիշարժան բեմականացումները Հայաստանի բեմում, ուրիշ մեծ աշխուժություն առաջացրեցին Մայր Հայրենիքի մշակութային կյանքում: Գյուրախաղերով հանդես գալով Սփյուռքի հայ համայնքներում՝ Դուք նաեւ հայաշունչ ոգին ու մեր թանկագին արժեքները հանդես սերն եւ հաստատել մեր ժողովրդի գավակաց հոգիներում:

«Գովելի է, որ մանկավարժական բերուն գործունեությամբ Լիբանանի պետական համալսարանում երկար տարիներ երիտասարդ սերունդին գիտելիքների հետ փոխանցել եք նաեւ Ձեր եւ ու կիրթում թատերական արվեստի հանդեպ՝ ասպում է հայրապետական սրբատառ կոնգրակում:

# ԱՅՈՅ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԵՐ

## ԿՈՍՏԱՆՍՆԱԿԻ Գ ԿԵՍԱՎՐԱԺԻ

(1307-1323)

Սկիզբը թիվ 4-5

637 թ. Օմար խալիֆը, տիրելով Երուսաղեմին, հատուկ հրովարտակով Հայոց պատրիարքին ճանաչել է հայերի և հույներից տարբեր դավանանքի քրիստոնյաների պես: Փաստորեն դրանից հետո Երուսաղեմի եպիսկոպոսները մահմեդական իշխանի կողմից ճանաչվել են պատրիարքներ: Հայ եպիսկոպոսներն իրենց իրավունքները պահեցին ինչպես մահմեդական տիրապետության, այնպես էլ խաչակրաց իշխանության շրջանում: Սալահեդդինը, խաչակիրներից գրավելով Երուսաղեմը, հայոց եպիսկոպոսության դիրքն ավելի բարձրացրեց, որպեսզի իրեն չնեղարձեն քրիստոնյաներին թշնամի լինելու մեջ: Ռուբինյան թագավորները գանազան տիրույթներ կորցրեցին Երուսաղեմի հայոց եպիսկոպոսին, որի կենտրոնն էր Հալեպի վանքը Սիրիա բարձունքի վրա:

Հարկ է նշել, որ Երուսաղեմի հայոց եպիսկոպոսները մշտապես նախանձախնդիր են եղել Հայոց Եկեղեցու ավանդույթներին, չնայած մշտապես չփոխվել են օտար դավանությունների հետ: Այստեղ երբեք ունի

չէին դնում Արեւմտացի օգնության վրա: Նրանք չընդունեցին ո՛չ Սսի և ո՛չ էլ Աղասայի ժողովների որոշումները: Երուսաղեմի աթոռակա Սարգիսն իր դիրքն ապահովելու համար դիմեց Եգիպտոսի սուլթան Նաուր-Մուհամեդին, որը հատուկ հրովարտակով նրան ճանաչեց հայերի ինքնավար պատրիարք, ինչպես նաեւ մյուս դավանակից միաբնակների: Դա խիստ բարձրացրեց Սարգիս պատրիարքի դիրքերը: Նա իրեն կարողորհու չհռչակեց, ոչ էլ եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք վերապահեց: Ստեղծված իրավիճակին հետ ստիպված էր համաձայնվել Սսի կաթողիկոսությունը: Եգիպտոսի սուլթանի օգնությամբ Սարգիս պատրիարքը վերջ տվեց վրաց ոսկեգլուխներին Սր Հակոբ վանքի կնամամբ: Թերեւս մոտորների ենթակա վրաց օպակիրները կամենում էին ներկայանալ որպես հայոց թագավորներ և տիրել Երուսաղեմում Հայոց Եկեղեցու ունեցվածքներին: Օմար խալիֆի տված հրովարտակը բավական եղավ, որ Սարգիս պատրիարքը հաղթեր:

Օշինի թագավորության շրջանը խիստ անհանգիստ էր: Իկոնիայի սուլթանության փլատակների վրա հսկողն էլած Կարամանի իշխանությունը 1318 թվին ասպատակ սկսեց մինչեւ Տարսուսի կողմերը, սակայն ջախջախվեց Կոռնիոսի իշխան Օշինի գնդերի կողմից: Սակայն որան հետեւեց 1319 թ. արշավանքը Եգիպտոսի սուլթանության կողմից, որը հանգեցրեց մեծ ավերածությունների և կոտորածների: Չնայած Օշինը կրկին դիմեց Հռոմի պապին, սակայն օգնություն այդպես էլ չստացվեց: Ընդհակառակը՝ Արեւմուտքը հույս ուներ, որ հայերը ու Կիպրոսի թագավորությունն իրենց ուժերով կփոփանին և վերականգնելու Երուսաղեմի խաչակրաց թագավորությունը:

Բուն Հայաստանում 1319 թվին մեծ երկրաշարժ եղավ, որից հատկապես տուժեցին արեւելյան գավառները: Մեծ վեճերը եղան Գեղարքունի գավառում: Կործանվեցին Ար-



տազի գավառի Սր Թադեոս մեծ վանքն ու Եկեղեցին, որոնք, սակայն, Չաքարիա արքեպիսկոպոսի ջանքերի շնորհիվ արագ վերականգնվեցին: Երկրաշարժից մեծապես տուժեց Անի քաղաքը: Օշինը և Կոստանոյի կաթողիկոսը, փոխանակ նպատակով երկրի վերաշինությանը, Արեւմուտքից հուսալիարկված և օգնության ակնկալիքը կորցրած, ուժ չգտան իրենց մեջ ճանե լատիսամուրությունից հրաժարվելու: Ըստ յանաքած՝ 1320 թ. հուլիսի 20-ին, Օշին թագավորը մահացավ՝ 37 տարեկան հասակում: Թերեւս նա օգնել էր իր մուտայրու մահը և թագավորական իշխանությունը կտակել էր Լեւոն անուկով 10-ամյա որդուն (որն Օշինի առաջին կնոջից՝ Չաքարից էր, քանի որ Երկրորդ կնոջից՝ Հովհաննիսյան ծնված որդին սակավակցաւ էր): Լեւոնն ծալ տարիքում ի վիճակի չէր երկիր կառավարելու, սակայն հայրը կազմել էր մի խնամակալական խորհուրդ, որը Երկիրը կկառավարեր մինչեւ նրա 20 տարեկան դառնալը: Խնամակալներ դարձան Կոռնիոսի իշխան Օշինը՝ Հեթում պատմիչի որդին և Օշին թագավորի անեծազը, որը նաեւ պալլ տիրոջն ստացավ՝ որպես բուն իսմամակալ, Կոստանոյի մարաշախուտ, որ Օշին Կոռնիոսյանի եղբայրն էր, և Նշիրի իշխան Հեթումը, որ թագավորության սենեկապետն էր: Չնայած որոշ պնդումներին՝ չորրորդ իսմամակալ չի եղել: Օշին արքան թաղվեց Դրազգանի արքունական դամբարանում:

Օշին Կոռնիոսյանը տեղ կանգնեց մակահասակ թագաժառանգին և թագադրու: Շուտով դեռահասակ Լեւոն արքայազնն օծ-


վեց թագավոր: Օշին պալյն ամուսնացավ Հովհաննա թագուհու հետ, իսկ իր նախկին կնոջից Ալիծ անուկով դստերն ամուսնացրեց մակահասակ թագավորի հետ՝ ալեկի ուժեղացնելով իր դիրքերը: Դրանով իսկ նա մի տեսակ թագավորախայր դարձավ:

Օշին պալյը, օգտագործելով իր դիրքը, շատ բերդերի տիրացավ՝ սպանելով դրան ընդդիմացողներին: Սակայն դրան հակառակ՝ ընդդիմադիրները գնալով ուժեղանում էին: Նա շարունակեց լատիսամուրության գիծը՝ Կոռնիոսի եպիսկոպոս հաստատելու համար դիմելով Հռոմի պապին: Այս քաղաքական գիծն առաջ բերեց Եգիպտոսի անբարոյ թշնամուրները: Ազգայն մտղորեցի իր համար հայերը դարձան կասկած հարուցող: Դրա արդյունքում Կիլիկյան Հայաստանը ենթարկվեց մտղոր թեմուրթաշի և Եգիպտական սուլթան Նաուր-Մուհամեդի զորքերի հարձակմանը: Երկիրն ավերվեց, արշավանքին զոհ դարձան շատ գորավարներ՝ Կանչի բերդի տեր Կոռնիոսը, Հեթում իշխանը, նրա եղբայր Կոստանոյնը և էլի 21 նշանավոր սպայտներ: Շատ սուժեցին Ալյափ բերդը և քաղաքը: Հայոց կաթողիկոս Կոստանոյնը և Օշինը դիմեցին Հռոմի պապին, սակայն իրավիճակը ժողովի որոշումը եղավ արդթել հայերի համար, իսկ օգնություն այդպես էլ չստացվեց:

1323 թ. մահացավ Կոստանոյնի Գ Կեսարացի կաթողիկոսը: Նա հովվապետեց 16 տարի: Իր խիստ ընդգծված լատիսամուրության պատճառով նա չընդունեց թե՛ հոգեւորականության մեծագույն մասի և թե՛ ամբողջ ժողովրդի կողմից:

Կոստանոյնի օրոք նշանավոր եղավ Կարոն եպիսկոպոս Գրիգորը, որը նախատակվեց 1321 թ. հունիսի 20-ին: Մտղոր Թեմուրթաշը Կոռնիոսի արշավանքից հետո հայտնվեց Կիլիկում և փորձեց հայոց ենեւրեցիները կողոպտել և ձերբակալելով Գրիգոր եպիսկոպոսին ու նրա հորեղբայր տեր Դալլ քահանային՝ թնի թելիստե տվեց նրանց: Սակայն Գրիգոր եպիսկոպոսը հրաժարվեց մահմեդականաւ ու ծախր տանջանքներից հետո գլխավորեց քաղաքից հրապարակում: Նրա մարմինը թուլյատրվեց թաղել միայն մահապատի շնորհի օրը և իրողին հանձնվեց Սր Արագիս եկեղեցու մտո, որը չի պահպանվել:

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր



## Երկխոսություն

Մարտի 17-18-ը Թբիլիսիսում տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցու և Եվրոպական ժողովուրդների կուսակցության խմբի (Երիտառոյա դեմոկրատներ) և Եվրոպական դեմոկրատների միջեւ տարածաշրջանային երկխոսություն, որին մասնակցեցին տարածաշրջանի հոգեւոր և աշխարհիկ իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Սր Եջմիածնից մասնակցեցին Կիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը և Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանը:

Երկխոսությանը բանախոսությամբ հանդես եկավ Մարկոս եպս Հովհաննիսյանը: Սրբազան հայրն անդրադարձավ տարածաշրջանում միջկրոնական և միջմշակութային երկխոսության անհրաժեշտությանը՝ արդի մարտահրավերներին դիմագրավելու գործում, ինչպես նաեւ Կրաստանում Հայ Առաքելական Եկեղեցու առեւ ծառայած իմնախնդիրներին:

Միջկեղեցական հարաբերությունների բաժին



## ԱՅՅ ՍԱՎՑԻՆԵ-ՉԱՎԱՆՍԻ ԵՐԱՐՈՒՄԸ

Մարտի 22-ին Կիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը և Կրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիվկանյանը այցելեցին Սամցխե-Չավախի նահանգ: Այցի նպատակն էր տեղի հայության հետ անցկացնել Սուրբ Չատիկի տոնը:

Միացյալյում նրանց դիմավորեցին առաջնորդական փոխանորդ Բաբգեն աբեղա Մալբիսյանը, նահանգապետի տեղակալ Սամվել Հովեյանը, շրջանային ժողովի նախագահի տեղակալ Արամ Դոդոյանը և եւ Ներկայացուցիչներ: Տեղի Սր Գր. Լուսավորիչ եկեղեցում Միացյալի շրջանի հոգեւոր հովիվ Սամուկ քին. Չեխանյանը մատուցեց ճրագալույցի պատարագ: Դատարագի ավարտին Բաբգեն աբեղա Մալբիսյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Չատկական ուղերձը, որից հետո Կիրահայոց թեմի առաջնորդն իր հայրական պատգամն ու օրինությունը տվեց Միացյալի հայությանը: Ապա հավատավոր ժողովրդին ողջունեց ՀՀ դեսպան Հրաչ Սիվկանյանը:

Մարտի 23-ի առավոտյան նրանց այցելեցին Միացյալի շրջանային վարչություն, ուր հանդիպեցին շրջանային ժողովի նախագահ Խաչատուր Սյվազյանին, շրջանային վարչության նախագահ Հարություն Հովհաննիսյանին և շրջանի կրթական ու մշակութային բնագավառի ղեկավարներին: Հանդիպանք շրջանի ղեկավարությունը ներկայացրեց այս տարվա սոցիալ-տնտեսական, շինարարական և ճանապարհաշինական ծրագրերը: Դեսպան Հրաչ Սիվկանյանը ողջունեց շրջանում ձեռքբերված հաջողությունները և Կրաստանի կառավարության շրջափե-



լի ներդրումները տարածաշրջանի զարգացման գործում: Եվրոպայի մարմինների ուղեկցությամբ դեսպանն ու առաջնորդն այցելեցին Միացյալում կառուցվող կաթի վերամշակման գործարան և նորակառույց սպորտդահլի: Ապա ուղեւորվեցին Միացյալի Սր Կաչ եկեղեցի, ուր Չատկական պատարագ մատուցեց Նարեկ քին. Դուչյանը: Հայր Բաբգենը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Չատկական պատգամը: Ժողովրդին շնորհավորանքի և ողջույնի իրենց խոսքերն ուղղեցին թեմի առաջնորդն ու դեսպանը:

Ապա Միացյալի շրջանի ղեկավարության ուղեկցությամբ պատմա-րականության անդամներն այցելեցին Լիտոնիկո, որտեղ Սր Մարգիս եկեղեցու բակում նրանք դիմավորեցին Արմաշ քին. Դոդոյանը, Կրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենգել Սկոյանը, շրջանային ժողովի նախագահ Ստեփան Երանոսյանը, շրջանային վարչության նախագահ Սուրեն Մոսոյանը, շրջանի մշակույթի և կրթության բնագավառի ղեկավար անձեր: Եկեղեցում հավաքված հայորդիներին շնորհավորանքի խոսքեր ասացին հայր Բաբգենը, Վազգեն սրբազանը և դեսպան արև Հրաչ Սիվկանյանը: Ապա շրջանի ղեկավարության առաջնորդությամբ իյուրերն այցելեցին շրջանային վարչություն, ուր ղեկավար մարմինները ներկայացրեցին 2008 թ. գործունեության ծրագիրը: Կիրահայոց թեմի առաջնորդի և Կրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի այցը Սամցխե-Չավախը ուղեկցության ավարտվեց Լիտոնիկոյում:

Կիրահայոց թեմի մամր դիվան

# ՄՈՒՐԲ ԷԱՐՈՒԹՅՈՒՆ

«Զի՞ խնորք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարևա» (Ղուկ. ԻԴ. 5)

Չափակ ամենամեծ, ամենատարախ և ամենահանդիսավոր տոնն է քրիստոնեական Եկեղեցուն: Ինչպես կանխատեսվել էր մարգարեների ու հենց Իր՝ Փրկչի կողմից, Զիսուս Բրիստոսը խաչվելուց, մեռելուց և թաղվելուց հետո՝ երրորդ օրը, հարություն առավ: Շարաթվա առաջին օրը՝ կիրակի՝ վաղ լուսաղեմին, երկրաշարժ եղավ, երկվեց իջավ Աստուծոց առաքված հրեշտակն ու հեռացրեց Տիրոջ գերբզմանի մուտքը փակող քարը: Իր անսպասելի էջքով է երկնային լույսով նա սարսափի ու փախուստի մատնեց պահակներին, որպեսզի յուրաքերենք էր և առաքյալների համար ազատի դեպի գերեզման տանող մուտքը: Շուտով՝ լույսը ետ չքաշված, գերեզմանի նյութ քարեաշաշտ կանայք՝ Մարիամ Մագդալենացին, Զակարի մայր Մարիամը և Սողոմոն՝ իրենց հետ բեղունվ առուշահատ յուր, որպեսզի սովորության համաձայն՝ մեծ Տիրոջ մարմինը: Եվ ի՞նչ տեսան կրակը, մի կողմ ընկած դամբասանքի ու երկու հրեշտակների, որոնք ասացին վախեցած կանանց. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ: Զի՜չեցեք՝ ինչպես խոսեց նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր. ասում էր, թե պետք է, որ մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը հարություն առնի» (Ղուկ. ԻԴ 5-7): Ինչպես Բրիստոսի փառավոր հարության ավետիսը առաջին անգամ հրեշտակների կողմից սրվեց յուրաքեր

կանանց, այնպես էլ հարություն առած Տիրոջ նախ տեսավ յուրաքեր կանանցից Մարիամ Մագդալենացին, և հետո՝ մյուսները: Իսկ ըստ Եկեղեցական մի ավանդության՝ Բրիստոսի հարության մասին բոլոր մարդկանցից առաջ իմացավ Աստվածամայրը:

Կեսօրին հարություն առած Տերը երեւաց նաեւ Պետրոսին, հետո՝ Էմմաւոս գյուղ գնացող երկու առաքելներին, իսկ հետո՝ մյուս բոլոր առաքյալներին, որ հավաքվել էին վերնասենյակում ու դռները հրեաների ահից ներսից կողպել: Ուշ երեկոյան, երբ Բրիստոսի տասը առաքյալները, Թովմասից բացի, հավաքվել էին վերնատանը և խոսում էին հարուցյալ Բրիստոսի հայտնությունների մասին, հանկարծ փակ դռների միջով հայտնվեց Ինքը՝ Տերը: «Նաղարություն ձեզ», լսվեց Նրա ձայնը: Բոլորը շփոթվեցին. արդո՞ք տեսիք կամ հոգի չէր նրանց առաջ կանգնած: Բայց Զիսուսն Իր խոսքով փարատեց նրանց կասկածները (տե՛ս Ղուկ. ԻԴ 39):

Աշախտներն ուրախացան՝ տեսնելով Ոսուցչին: Սակայն անսասնան այլ ուրախության հետ մեկտեղ նրանց հավաքող կատարյալ չէր, քանզի նրանց ուզում էին ավելի քան համոզված լինել, որ այդ ամենն իրականություն է: Եվ սիւհ Տերը հարցրեց նրանց. «Այստեղ ուտելու քան ունե՞ք»: Եվ նրանք տվեցին Նրան խորոված ձկան կը կտոր և մերդախորիսի: Եվ Նա առավ, կերավ նրանց առաջ» (Ղուկ. ԻԴ 41-43): Եվ աշակերտների կասկածների փոխարինեցին լիակատար հավատն ու ցնծությունը:



Զարությունից հետո՝ շուրջ քառասուն օր, Բրիստոսը հայտնվում էր Իր աշակերտներին, նրանց լուսաբանում սուրբ գրվածքները, բացատրում չարչարանների, մահվան և հարության մասին եղած բոլոր մարգարեություններն ու կարգադրում աշխարհով մեկ քարոզել Իր ուսմունքը՝ խոստանալով միշտ մեզ հետ լինել: Ուստի Բրիստոսի հարությունը մեզ հույս է տալիս, որ եթե հետեւենք քրիստոնեական վարդապետությանը, կատարենք պատվիրանները, հավատանք Բրիստոսին, ով Իր վրա կրեց ողջ մարդկության մեղքերը, ապա մենք եւս հարություն կառնենք ու հավիտենական կյանքը կձայնանանք:

Այսպիսով՝ Բրիստոսի հարության ավարտեց փրկության մեծ խորհուրդը: Այդ հարությամբ վկայվեց, որ Զիսուս Բրիստոսն է ճշմարիտ Աստված, Զավիյն ու Փրկիչը

համայն մարդկության: Իր մահից հետո Բրիստոսն իջավ դոխիւք և խորապէց մահաց: Իր հարությամբ Բրիստոսն օրինեց մարդկանց հանդիսանալու հարությունը, որ կլինի մեծ դատաստանի օրը:

Չափիկը քրիստոնեական Եկեղեցու ամենահին տոնն է և ևսաստավել է դեռեւս առաքելական ժամանակներից՝ առաքյալների կողմից, որոնք և պատգամեցին բոլոր հավատացյալներին տոնել այն՝ ի հիշատակ Բրիստոսի հարության: «Զանգի Բրիստոսը՝ մեր գաղտնի մորթվեց: Ուստի տոն կատարեք» (ԱՄ կրթ. Ե 7-8): Չափիկ անվան տակ ինն Եկեղեցին իշխատակում էր երկու իրադարձություն՝ Բրիստոսի տառապանքները և հարությունը: Այդ պատճառով տոնին նվիրվում էին օրեր, որոնք հաջորդում էին կիրակիին ու շաբաթանվում: Առաջին օրերն ուղեկցվում էին խիստ պահեցով, իսկ հաջորդե-

րը՝ հանդիսավոր ուրախությամբ: Արդյունքում այդ օրերը ստացան Ավագ (չարաչարանաց) շաբաթ և Զարություն անունները: Զարությունը նախորդում էր Մեծ պահեք, որ կուրվում է նաեւ Սուրբ քառասունը: Չափիկ օրերին՝ Զարությունից մինչեւ Զամբարձում, քրիստոնյաների մեջ սովորություն կար միմյանց ողորդել «Բրիստոս յարեալ ի մեռելոց» և «Օրհնելա՛ և յարութիւնն Բրիստոսի» խոսքերով: Զուց եկած սովորության համաձայն՝ ողջույնի ընթացքում հավատացյալները միմյանց կարմիր հավկիթներ են նվիրում: Ս. Ավետարանում ասվում է՝ երբ մոգերը եկան Նորածին Փրկչի մոտ, բերեցին նվերներ՝ ոսկի, զմուշ և կնդրուկ: Ինչպես ասում է հնագույն ավանդությունը, երբ Մարիամ Մագդալենացին գնաց Զոռմի կայսր Տիրեղոսի մոտ, հետեւելով այդ սովորույթին, որպես նվեր կարմիր ձու տարավ:

Ձուս խորհրդանշան է կյանքը, այս դեպքում՝ Զիսուս Բրիստոսի հարությունը: Բացի որակից՝ ձուս համարվում է նաեւ մեր գալիից կյանքի վերածնության խորհրդանշանը: Իսկ կարմիր ներկած ձուս ինչեղանակ է մեզ, որ մեր Նոր կյանքը ձեռք է բերվել Զիսուս Բրիստոսի անարատ արյամբ:

Ներկայիս քրիստոնեական բոլոր Եկեղեցիները Չափիկ օրը որոշում են՝ հիմնվելով Նկիկ տիեզերածողով կանոնի վրա, այսինքն՝ Չափիկը տոնում են գարնանային գիշերահավասարի առաջին լիալուսնի հաջորդող առաջին կիրակի օրը:

Արմեն սրկ. ԿԱՉԱՐՅԱՆ  
Գեորգյան հոգևոր ճեմարանի  
2 լսարանի սան

Սկզբնական թիվ 4-5

## Դ. Բռնագաղթը

Սուվալիյան եղեռնագործությունից հետո, Մոսկվայի թուլությունից և խրախուսանքով, Ադրբեջանում շարունակվում էր հակահայկական քարոզչությունը: 1988 թ. գարնանից արդեն քանակական իշխանությունների կազմակերպած ավագակային ջոկատները հարձակվում էին հայկական գյուղերի վրա, թալանում, սպանում մարդկանց, պահանջում հեռանալ իրենց բնակավայրերից: Կիրովաբադից (Գյանջա), Բաքվից, Շահումյանի և Խանկարի շրջաններից ու այլ հալածատ վայրերից սկսվեց բնակչության արտաքսումը, որն ուղեկցվում էր բռնություններով ու խոշտակումներով: Մեկ ու կես ամսվա ընթացքում (ապրիլ-մայիս) շուրջ 300 հազար հայ բռնագաղթվեց, ուր ընթացքում, ոչ լրիվ տվյալներով, գոհվեց 270 մարդ: Բռնագաղթվածներն արդեն քանակական հրոսակներին էին թողնում իրենց բնակարանը, կահույքը, անասունները և այլն: Դա ավելի էր ռզեւորում անպատեժիության մթնոլորտում գործող խուճախին: Իրենց հանցագործությունները ջոկարելու և կատարվող Ադրբեջանի իշխանությունները հարկադրում էին կեղծ պայմանագրեր ստորագրել, որ իբր հայերը կամավոր են մեկնում Զայաստան: Միաժամանակ վախենալով վրեժխնդրությունից, ինչպես նաեւ համաշխարհային հանրությանը թյուրիմացության մեջ գցելու նպատակով, Ադրբեջանի ներքին իշխանությունները 1988 թ. դեկտեմբերին կազմակերպեցին հայաստանաբնակ արդեն քանակների արտագաղթը: Մոսկվան չտապեց հավասարության նշան ունել տարվա սկզբին Ադրբեջանից փախած հայերին և տարվա վերջում Զայաստանից կազմակերպված ագրեսիոնի արտագաղթերի միջեւ: Մ.

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂ 1988-2006 թթ. ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ



Գորբաչովի մերձավորները հաշվառելի առել մի մակուրը, Ադրբեջանի հայերը քանակական խոշտակվեցին իրենց ունեցվածքը թողնելով էին փախել, իսկ հայաստանաբնակ արդեն քանակների ոչ միայն հնարավորություն ստրվեց վաճառելու կամ փոխանակելու իրենց բնակարանները, այլև իրենց ունեցվածքը փոխարդելու համար մեքենաներ և նույնիսկ ինքնաթիռներ տրամարդելու: 1988 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին Ադրբեջանից բռնագաղթվեց մոտ 400 հազար հայ, որոնց մոտ կեսը հանգրվածեց Զայաստանում, իսկ մնացածը՝ ԽՍՀՄ տարբեր հանրապետու-

նություններում: Իսկ տարեկանից Զայաստանից արտագաղթած 150 հազար արդեն քանակներն առանց դժվարությունների տեղավորվեցին հայերի բնակարաններում: Ընդ որում՝ Զայաստան ներգաղթածները իմնականում քաղաքաբնակներ էին, որը մեծ դժվարությունների և նույնիսկ ինքնաթիռների 100 հազար ընտանիք հեղափոխվեց էր բնակարան ստանալու համար):

Զանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կիճակն անտանելի վատացավ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրա-

շարժի հետեանքով: Այդ սհավոր աղետին զոհ գնաց 25 հազար մարդ (պաշտոնական տվյալներով), 530 հազարը մնաց անթեւան: Ավերեցին հարյուրավոր գյուղեր, մի շարք քաղաքներ, շարքից դուրս եկավ արդյունաբերությունը, քայքայվեց գյուղատնտեսությունը: Զանրապետությունը կաթնմանար եղավ: Անթուր աշխարհը ցավով արձագանքեց այդ սհավոր աղետին և օգուության ձեռք մեկնեց հայ ժողովրդին:

## Ե. Ազատագրական պայքարի նոր փուլը

1988 թ. դեկտեմբերյան աղետի սոցիալ-տնտեսական և բարոյա-հոգեբանական ծանր ու բարդ հետեանքներն անգամ չընդհատեցին Արցախի ազատագրման համար ծավալվող համաժողովրդական պայքարը: Զայ ժողովրդին պարտի գոտի ժամանակ: Ա. Գորբաչովից պահանքեց արդարացի լուծում տալ արցախյան իմնահարցին՝ Արցախը միավորելով մայր հայրենիքի հետ: Սակայն ԽՍՀՄ ղեկավարը ոչ միայն չընդունեց այդ արդարացի պահանքին, այլև փորձեց վարկաբեկել հայերի ազատագրական շարժումը և նույն օրը կարգադրեց հաշվեհարդար տեսել շարժման կազմակերպիչների ու ղեկավարների հետ: Դեկտեմբեր-հունվար ամիսներին կանաչավորվեցին և մուսոլյան բանտեր փոխարդվեցին «Դարաբազ» կոմիտեի անդամները և մի քանի տասնյակ երիտասարդներ Զայաստա-

նից ու Արցախից: Մոսկվայի արդեն քանակական իշխանությունները փորձում էին օգտագործել երկրաշարժի ծանր հետեանքները, գլխատել հայերի ազատագրական պայքարը և դաժան միջոցներով վերջնականապես ճնշել այն: Սակայն կանաչակա արդյունք ստացվեց: Զայաստանում ու Դարաբազում նոր թափով բորբոքվեցին բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Արցախյան իմնահարցի արդարացի լուծման պահանքին ավելացավ նաեւ շարժման ղեկավարներին ազատ արձակելու պահանքը: Այս ճակատագրական օրերին հայ ժողովրդի արդարացի պահանքին պաշտպան կանգնեցին ԽՍՀՄ առաջավոր մտավորականներ Ա. Սախարովը, Մ. Դուդինը, և Ա. Նույկինը և ուրիշներ: Նրանք երկրի առաջադիմական, ժողովրդավարական ուժերին կոչ էին անում բոլոր միջոցներով ստատար կանգնել հայ ժողովրդի արդարացի պահանքին: 1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Լեռնային Դարաբազում կառավարման նոր, հատուկ ձեւ մտցնելու մասին: Նախատեսվում էր ստեղծել 8 հոգուց (մեծ մասը Մոսկվայից) կազմված կառավարական հատուկ կոմիտե՝ ԽՍՀՄ Կենտկոմի բաժնի վարիչ: Ա. Վոլսկու գլխավորությամբ: Նույն որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարտիրոհի գործունեությունը: Կերպվեց մարդկության քանակական մարմինը՝ Մարզկոմը: Այս վերջինն արվում էր մարզկոմի առաջին քարտուղար, ազատագրական շարժման ղեկավարներից մեկից՝ Գ. Ողորտյանից ազատվելու նպատակով: Շուտով Ա. Վոլսկու գլխավորած կոմիտեն սկսեց աշխատանքները:

# ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

(1683 - 1768)



**Պ**աղտասար Դպիրը եղել է գրական-մշակութային խոշոր գործիչ, ժամանակի իսկական գաղափարորդ նոր կյանքի արշավույթի ամեն ինչով փորձեց նպաստել իր ժողովրդի վերածնունդին: Բանաստեղծ էր և երգիչ, մանկավարժ էր և հրատարակիչ: Ցածի բանաստեղծ էր և, որ իրեն վիճակված տառապանք ողբի վերածեց էր այդ ողբով բացեց իր ներաշխարհն ու քաղաքացիական կերպարը:

**Կյանքը:** Պաղտասար Դպիրը ծնվել է 1683 թ. Կեսարիա քաղաքում: Դպիրը Գրիգորը, հյուսն էր, որ բնակություն է հաստատում Կոստանդնուպոլսում: Սոր անունն էր Թուրվանդա:

Պաղտասարը Պոլսում ուսանել է Աստվածատուր Ջուրայեցու դպրոցում: Այնտեղ ծայր էր հասնում էր իր երգերը: Երգում էր նաև եկեղեցում: Դպիրը նրա եկեղեցական կրթումն էր: Իր երաժշտական օժտվածության մասին «Ան Կերնևն Երուսաղեմ եկեղեցին անդրանկաց» տաղի մեջ գրում է.

Գարնան քո գալոյ ինձ ձնեսանս  
ստորանամ միշտ,  
Սրգով լընանիմ հառաչելոյ զուրով  
երաժիշտ,  
Է ինձ երանի, թէ լինիցիմ ռախս ի քո  
երկիրոյ, սեր իմ,  
Յայնմամ զո գեղոյն երգն որ ի իսկ լինի  
բերանեալ:

Պաղտասար Դպիրը համբավի էր և հասնում որպես հրատարակիչ՝ 1719- 1731 թթ. տպագրելով հայ մատենագրության ընտիր նմուշներ: Այնուհետև նա դեկավարել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի նորաստեղծ դպրատունը և շարունակել իր արդյունավետ գործունեությունն ուսուցչության ապարեզում: Այդ տարիներին պատրիարքը նշանակվոր հայկաբան Զակարայանն էր (1701-1764), որը բանասիրության մեջ առավել չափով հայտնի է և արեկացու «Մատյան...»-ի սեկուլյարիստ (1745):

Պաղտասար Դպիրի կյանքում եղել են ներդրության պահեր, կրան մատնել էր բարեկամները, անգամ նա հայտնվել է դատարանում, ենթարկվել թիպարտության, բայց քանի որ, ինչպես ինքն է

գրում. «Չրպարտեաց իբրե շուշան...», այսինքն՝ շուշանի պես արդար էր, տեղ Գաբրիել անունով մեկի օժանդակությամբ ազատվում էր վերագտնում կյանքի բնական ուղին: Կյանքի ծանր հարվածների և ենթարկվել է երիտասարդ տարիքում: Այդ ողով բանաստեղծություններից մեկը գրել է 1709 թ.:

Պաղտասար Դպիրի կյանքի առաջին տարիների ձայնորդության արձագանքն առկա է նրա մահվան կապակցությամբ Պետրոս Ղազարյանցու գրած «Դրուստ ողբերգություն առ հանգուցեալ ընտիր Դպիրն Պաղտասար» տաղի առաջին տան մեջ.

Քեղուղ համեստ, անհավասար,  
Ի հայկազնեսայ յաշխարհամար,  
Շատ առջնոյն անկարթահար,  
Ընքին կրման ի կեսնս անկար:  
Նրա անունը պահպանվել է և՛ Պաղտասար, և՛ Քաղդասար ձեռերով: Մահացել է 1768 թ.կալանի:

**Ստեղծագործությունը:** Պաղտասար Դպիրը նախեառաջ բանաստեղծ է: Սակայն նա զբաղվել է նաև գիտական, բանասիրական, պատմագիտական գործունեությամբ: Գրել է Գրիգոր Լուսավորչի պատմությունը, կազմել Նոր Կտակարանի ցանկագիրը, ստեղծել «Ժամանակագրություն», հրատարակել և արեկացու «Մատյան...»-ը (1726):

Գրել է տրամաբանության համառոտ մեկնություն, ժողովրդին սովորեցրել նամակ գրելու հնուություն, հայատառ թուրքերեն տպագրել է բազմամտեսակ երկեր էր հասցեագրել մայրենի լեզուն կորցրած հայությանը: Կազմել է գրաբարի և աշխարհաբարի բերանակարգի դասագրքեր:

Կորած են համարվում «Համանախուսթիկն պատմութեան Մովսէս Խորենացու» և «Պատմութիւն տոհմային» աշխատությունները:

Այս ամենով հանդերձ՝ Պաղտասար

Դպիրը նախ «Տաղարանների» և «Տաղարանիկների» ինչնակ է: Հրատարակել է այդպիսի 7 ժողովածու, որոնց մեջ գետնըված է 171 բանաստեղծություն:

Պաղտասար Դպիրն իր ստեղծագործության մեջ հասավ այնպիսի համարության, որ իրար էր բերում հայոց պոեզիայի երկու եզրերը՝ հոգեւոր և աշխարհիկ: Մեկի անունը հայոց իին է միջնադարյան պոեզիան էր, մյուսինը՝ ժողովրդական երգը, որ 17-18-րդ դարերում ընդունել էր աշուղական ձև: Նրա երգերը բովանդակությամբ բազմազան են. առաջին խմբակցողը եղել է ինքն՝ առանձնացնելով սիրո և կարոտի, նաև քնության ու հոգեւոր, նաև խոհարարական բանաստեղծությունները: Նրա ժառանգությունը կենդանիացնելը ստեղծագործության բուն բովանդակությունից բխող երկու հիմնական խմբավորումով՝ սիրո և կարոտի երգեր, անձնական քնարչություն:

**Սիրո և կարոտի երգեր:** Պաղտասար Դպիրի սիրային քնարչությունն ունի իշխող մի քանի բովանդակային երանգներ: Ակնհայտ է մի բան, որ նա կորցրած էր կարոտով մտաբերվող սիրո երգիչ՝ սպասում էր վերելիչ մոմոնթերով: Սիրած կնոջ անհոնայ նա ունի պաշտամունք, նրան նկարագրում է իր արտաքին գեղեցկությամբ, նրան դիմում է և ազգի, սիրելի, սիրուն, արեգակ, անձնան, գեղափայլուն, գլեխի, գեղազնիվ սիրելի, սիրասուն գովելի, հոգուս հոգի էր համանան շատ այլ արտահայտություններով:

Բայց այստեղ կարեւորը ոչ թե սիրո առարկան է, որին տեղյակ է, այլ սիրահարի հոգեվիճակը, որը լի է դառնալի պարուններով: Սիրոց դաղված սիրահարն է տաղերի հեղուց, որ կարոտի երգեր է հորինում և ստուգի վերապարուն այն երջանկությունը, որ տուժել էր իրեն, բայց իմնա չկա: Սիրո և կյանքի երգարանը համակցելով՝ ստեղծ-

վում է այսպիսի պատկեր.

1708 թվականին վախճանվել է նրա առաջին սերը («Ի նքնման...»), լույս թվականի կամ ավելի վաղ Պաղտասար Դպիրը դատական կարգով թիպարտության է ենթարկվել («Դարձեալ վեպ կրից երկնի հոգուս»): Այս կրկնակի ողբերգությունն է, անհուն նրա սիրեղությունն իմրում:

